ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2015թ. հոկտեմբերի 20-ի նիստի**

Խորհրդի 49 անդամներից ներկա էին 40-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Մուշյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ.

**1. ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա իրավագիտության ֆակուլտետի նոր կանոնադրության ընդունում (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյան):**

**ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա իրավագիտության ֆակուլտետի նոր կանոնադրության ընդունման հարցը (զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյան):**

Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը նշեց, որ ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակվել է իրավագիտության ֆակուլտետի նոր կանոնադրության նախագիծը՝ տեղեկացնելով, որ նոր կանոնադրության ընդունումը պայմանավորված է ԵՊՀ կազմակերպաիրավական ձևի փոփոխության, այն է՝ հիմնադրամի վերակազմակերպվելու հանգամանքով: Գ.Ղազինյանը, մասնավորապես, տեղեկացրեց, որ ֆակուլտետի խորհուրդը դադարում է գործել, և նրա լիազորությունները փոխանցվելու են ֆակուլտետի գիտական խորհրդին, ընդլայնվելու է նաև գիտական խորհրդի կազմը: Խորհրդի նախագահը նշեց, որ ֆակուլտետի նոր կանոնադրության նախագիծն ուղարկվել է ամբիոններին՝ առաջարկներ ներկայացնելու համար: Սահմանադրական իրավունքի ամբիոնը ներկայացրել է գրավոր առաջարկություններ, իսկ մյուս ամբիոններից ստացվել են բանավոր առաջարկություններ, որոնց հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել ֆակուլտետի նոր կանոնադրության նախագծում: Գ.Ղազինյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց նաև այն հանգամանքի վրա, որ ֆակուլտետի գիտական խորհրդի և ֆակուլտետի դեկանի՝ գործող կանոնադրությամբ նախատեսված՝ այդ մարմինների իրավասությունից բխող

առանձին լիազորություններ ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության մեջ չեն նախատեսվել, սակայն ֆակուլտետի կանոնադրության մեջ դրանք սահմանվելու են:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Դանիելյանը, դոց. Դ.Ավետիսյանը, դոց. Գ.Պետրոսյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նոր կանոնադրությունը:

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Սուքյան*